

ՍԱՐՈՅԵԱՆԻ ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺԱՆԿԱՐԸ

Կիրակի, 17 Ապրիլ 1994-ին, Փաստինայի Աղաճանեան սրահին մէջ պիտի ցուցադրուի նշանաւոր նկարիչ եւ բեմադրիչ՝ Փօլ Գալինեանի պատրաստած ժապաւէնը՝ «Սարոյեան - Մարդը եւ Գրողը» խորագրով:

Փօլ Գալինեանը այն քիչերէն է, որ առանձնաշնորհը ունեցած է մօտէն ճանչնալու անգուգական գրագէտը ու անոր հետ ունեցած է մտերմիկ պահեր: Անձնապէս, ես որոշ վերապահումներ ունիմ շատ մը հայկական շարժանկարներու նկատմամբ, սակայն այս մէկը միջազգային տարողութեամբ ու չափանիշներով պատրաստուած մասնագիտական գործ մըն է, որովհետեւ Գալինեանը իսկական խստապահանջ ու դժուարահաճ արուեստագէտ մը ըլլալով, ամէն ջանքի գործ դրած է տալու համար Սարոյեանի ամբողջական ու հարազատ պատկերը ու նաեւ իր հարուստ կեանքի այլազան դրուագները: Ակնյայտ է որ ան ունի խորունկ պաշտամունք մը մեծ գրողի հանդէպ ու լաւապէս սիրած ու ըմբռնած է անոր ներաշխարհը:

Անձնապէս ես ցնցուեցայ՝ տեսնելով այս շարժանկարը: Ժապաւէնը կը ներկայացնէ գրեթէ 80 տարիներու շրջան մը, 1900-ական թուականներէն մինչեւ հեղինակին վաղահաս մահը, 1981 Մայիս 18-ին:

Յառաջաբանի մի քանի խօսքերէն ետք, շարժանկարը կը սկսի Սարոյեանի անգլերէն ու հայերէն լեզուներով արտայայտած յիշողութիւնները, իր զգացումներն ու կեանքի տպաւորութիւնները: Ապա՝ խօսք կ'առնէ ծանօթ հայագգի դերասան Մայքլ-Օհանեան Քանըրդը, որ սքանչելի կերպով կը ներկայացնէ Սարոյեան գրագէտը, յենլով իր կենսագրական ծանօթութիւններուն, իր գրոյցներուն, հրապարակային ելոյթներուն, թերթերու եւ պարբերականներու մէջ երեւցած անհամար յօդուածներու ինչպէս նաեւ իր անձնական ծանօթութիւններու վրայ:

Ժապաւէնին մէջ Ֆրէզնօն կ'երեւայ իր հին ու նոր տեսարաններով ու վերակառուցուած իւրայատուկ վայրերով:

Անոնք՝ որոնք ճանչցած են Սարոյեանը՝ որպէս հայ մարդ եւ կամ ծանօթ են իր համամարդկային գրականութեան, շատ պիտի գնահատեն արուեստագէտ Գալինեանի մեծ զոհողութիւններով պատրաստած այս լուրջ ու յաջող շարժանկարը:

ՅՈՎԻԿ ԷԹԵԱՆ,